

Թիւնից յետոյ Այա—Սոֆիա մզկիթի է փոխուել, Իսկ ուսմանական ոճը Ա. դարում սկսուելով ԺԲ. և ԺԳ. դարերում հակուում է հետզհետէ դէպի գոթականը, որ իւր կողմից մի քանի զարգացման շրջաններ է անցել՝ մինչև ուրն է սասանսի տիրապետութիւնը։—Հայոց եկեղեցին ստեղծել է բիւզանդական ոճի մի յատուկ տիպ, որ թէ սկզբնական կենդրոնական ձևի օրինակներ ներկայացնել կարող է և թէ յետոյ աւելի զարգացած ձևերի. բայց այստեղ կարելի է հետքեր նկատել նաև միւս ոճերից, որոնց մի մասը գուցէ ինքնաբերաբար է յառաջ եկել, նոյն ոգու ազդեցութեամբ, որ ներգործել է միւս եկեղեցիներում։

ԲԱՐԸԼԷՆ.



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՒՆ

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Իտալական ազգային տօնը, որ այնքան մեծ շքով կատարուեցաւ սեպտեմբերի 20-ին Հռոմում, գրգռեց պապի և բոլոր երկրների կաթողիկոսների զայրոյթը, Եյդ մասին արդէն հաղորդել ենք «Արարտ»ի նախընթաց համարում։ Մինչդեռ Իտալացիք Հռոմի առումն և պապի աշխարհական իշխանութեան բարձումն Իտալիայի միութեան վախճանական յաղթանակն են համարում։ Վատիկանն այդ համարում է անհաւատութեան յաղթանակն և մի մեծ պատմական անիրաւութիւն։ Մինչդեռ իտալացի հայրենասէրներն ու վերածնուած Իտալիայի բարեկամները շտապում էին ուրախակից լինելու Հռոմ բերտ արքայի կառավարութեան տօնախմբութեանը, ջերմեանդ իտալացի և օտարազգի կաթողիկոսներն շտապում էին պապին մխիթարելու։

Նոյն իսկ Իտալիայում պակաս չէ այն մարդկանց թիւը, որոնք աւելի պապի կողմն են, քան թէ իրենց ազգային կառավարութեան։ Գրան ապացոյց են պապի այն խօսքերը, որ ասել է Տուրին քաղաքի մի լրագրի երեք աշխատակիցներին, որոնք սեպտեմբ. 20-ին ներկայացել են պապին վշտակցութիւն յայտնելու համար և այդ առթիւ մատուցել են 25,000 ֆրանկ յօգուտ ս. Պետրոսի լուսնայի գանձարանին։ Պապն յայտնել է այդ լրագրողներին, որ «Իտալիայում ոչ մի զիւղ անգամ չը կայ, որ տեղից նա բողոք ստացած չը լինի սեպտեմբ. 20-ի տօնախմբութեան ընդդէմ»։

Ամէնքը մեծ հետաքրքրութեամբ սպասում էին թէ ի՞նչ պիտի խօսի Հռոմի քահանայապետը սեպտեմբեր 20-ի տօնախմբութեան առթիւ, Հեռագիրն արդէն հաղորդեց մեզ, որ պապը իւր կարծիքն այդ

մասին յայտնել է մի նամակով առ իւր քաղաքական քարտուղար ծիրանաւոր Ռամպոլլոն։ Պապը կարեւոր է համարել իրեն ուղղուած բազմաթիւ ցաւակցական գրութիւնների և բողոքների առթիւ յայտնել իւր կարծիքը, Լեոն ԺԳ. յայտնում է, որ ամենեկին մտադիր չէ և կարող իսկ չէ հրաժարուել աշխարհական իշխանութիւնից։ Եյթմանն վիճակը պապն համարում է անցողական, ուստի և զգուշութեամբ հետևում է քաղաքական անցքերին, որպէս զի հնարաւոր եղած վայրկենին իւր իրաւունքներին տիրանալ կարողանայ, իտալական կառավարութեան յայտարարութիւնները նա խաբեւայութիւններ է անուանում և այդ տօնախմբութիւնը հակաքրիստոնէական վարդապետութիւնների յաղթանակն է կոչում։ Հռոմի առումը ոչ թէ Իտալիայի միութիւնն է, այլ մասսոնականութեան յաղթութիւնը։

Իտալական կառավարութեան և Վատիկանի յարաբերութիւններն ուրեմն կատարեալ պատերազմական են, որովհետև Հռոմբնութեաւորի կառավարութիւնը յայտնում է, որ պապի աշխարհական իշխանութիւնը վերջացել է և Հռոմն այլևս յետ չի տալ, իսկ պապը ձգտում է այդ երկուսն էլ ձեռք բերել։

—Անընդհատ ժամանակներս Վատիկանի և Կուրիի նալի յարաբերութիւններն աւելի ևս վատացան։ Պորտուգալիոյ թագաւոր Դոմ Կարլոսը ցանկութիւն էր յայտնել այցելութեան գնալու Հռոմբնութեաւորին, Իտալական կառավարութիւնը կամենալով այդ առթիւ օգտուել և աշխարհին յայտնել, որ մինչև իսկ կաթողիկ իշխաններից «ամենուղափառ» թագաւորը պիտի Հռոմում այցիլէ Հռոմբնութեաւորին և այդու ճանաչէ Հռոմն իբրև մայրաքաղաք Իտալիոյ և ոչ պապի։ Վատիկանում այդ իմանալով սպառնացին Դոմ Կարլոսին, որ եթէ նա Հռոմ գայ, պապը նրան չի ընդունել և իւր նուէցի ուսին (գեսպանին) կը կանչէ Լիսաբոնից, այս բանից վախենալով Դոմ Կարլոսը հրաժարուեց իւր այցելութիւնից, Իտալական կառավարութիւնը չը դիմանալով այս վիրաւորանքին, հրամայել է իւր գեսպանին, որ բոլոր յարաբերութիւնները կտրէ Լիսաբոնի կառավարութեան հետ և միայն ընթացիկ գործերով պարապի։ Պորտուգալիոյ կառավարութիւնը ներողութիւն խնդրելով հանդերձ մեղքը կամենում է իւր Հռոմի գեսպանի վերայ բարդել, որին և առժամ երկարատեւ արձակուրդ է տրուած։

Եյս հանգամանքն աւելի առաջ ունենալով Իտալիայում շատերը սկսել են պահանջել, որ կառավարութիւնը Հռոմից հանէ պապին, որ նոյնպէս ցանկութիւն է յայտնել թողնել Իտալիան սակայն

ոչ պապը հռովմը կը թողնի և ոչ էլ կառավարութիւնը կը ստիպէ նրան այդ ամենելու որովհետեւ պապը հազիւ այլու մի աւելի լաւ ապաստանարան գտնի և Նոսայիան հազիւ յօժարի պապի բարոյական և նիւթական տուած օգուտներէն հրաժարուիլ:

— Ինչպէս յայտնի է Նոսայիան Հարէշիային սահմանակից մի գաղթավայր ունի, որի թագաւորին իտալական կառավարութիւնը իրեն վաստակ է ճանաչում: սակայն Հարէշի նեգուս (թագաւոր) Մենելիկը մտադիր չէ ամենեւին այդ ընդունելու: Այս տարի գարնանը Հարէշից մի պատգամաւորութիւն եկաւ Պետերբուրգ, որինպատակն էր կրօնական կապ հաստատել Ռուսիայի հետ: Պապն այս առթիւ մեծ աջակցութիւն է ցոյց տալիս Նոսայիային՝ քարոզիչներ ուղարկելով Հարէշտան և ընդգէմ՝ ուղղափառութեան քարոզութիւններ կատարել տալով:

— Հունգարիայում նոր հաստատուած քաղաքական օրէնքով արդէն իսկ ընդունուել է քաղաքական ամուսնութիւնը, որի դէմ այնքան մաքառեց կաթոլիկ կղերը: Այժմ հրատարակուած է արդէն, մեր նախնիքաց համարներում յիշատակած, հունգարական եպիսկոպոսների շրջաբերականը, այդ օրէնքի ոյժը թուլացնելու համար եկեղեցականների գործ դնելիք միջոցների մասին: Այդ հովուական շրջաբերականները պիտի կարգացունեն կիրակի է տօն օրերին եկեղեցիներում ու դրանց պիտի կցունեն հետեւեալ բացատրութիւններս: Ամուսնանալ ցանկացողները նախապէս պիտի յայտնեն այդ մասին իրենց ծխատէր քահանաներին, որանք պիտի յայտարարեն եկեղեցիներում, որ եթէ արգելքներ կան, պարզունեն: Քահանայի թոյլտուութիւնից յետոյ միայն ամուսնացողները կարող են գնալ և քաղաքական իշխանութեան յայտնել և իրենց դաշը կապել, որից յետոյ եկեղեցում՝ ըստ եկեղեցական ծիսի պսակունեն: Ուր այս պայմանները չը կատարէ, պիտի զրկուի ս. հաղորդութիւնից, նրա որդիքը մկրտութիւնից և երկու ամուսինք ևս քրիստոնէական թաղումից: Միմիայն քաղաքական ձեռով ամուսնացողներն իրաւունք չը պիտի ունենան ծառայելու հոգևորականների տեսչութեան յանձնուած հիմնարկութիւնների մէջ: Շրջաբերականի մէջ յատկապէս շեշտուած է, որ պսակը եկեղեցում խորհուրդ է և չէ կարող քակուել: Այս շրջաբերականը մեծ ազդեցութիւն է գործում ժողովրդի վերայ, մանաւանդ շինական ժողովրդի, որի համար նոր օրէնքը մեծեալ տառ կը մնայ:

— Պապի անդլիական ազդին ուղղած միութեան կոնգակը շարունակում է մեծ աղմուկ հանել, սկըսած անդլիական եկեղեցու պետից, մինչև յետին գիւղական քահանայք այդ մասին յայտնում են

իրենց կարծիքներն և ապացուցանում, որ պապը նախ քան միութեան առաջարկն անելը, պէտք է խորհէր թէ ինչու պապականութիւնը չը կարողացաւ կաթոլիկ եկեղեցու ամբողջութիւնը պահպանել և առիթ տուաւ նրա բաժանման: Այս մասին իրենց կարծիքներն յայտնել են և անդլիական նշանաւոր աստուածաբաններն, ինչպէս օրինակ կաննիկոս Փարրարը, Սակայն կան և միութեան սիրահարներ, որոնք ընդհանուր քրիստոնէութեան միութեան վեհաղափարի իրազօրծումը տեսնել կուզենային: հարկաւ երկկողմի զիջումներով, այդպիսիներին պատասխանելով՝ պապի ներկայացուցիչ Առհման կարգինալն յայտարարել է, որ պապը ոչ մի զիջումն անել կարող չէ իւր կողմից:

— Հռովմի քահանայապետն վերջին օրերս և հայկական գործերում խառնեցին: Անգլո—հայկական ընկերութեան քարտուղար կապիտան Ատկինը գնաց Նոսայիա հայաստանների մի ընկերութիւն կազմելու և պապի գործակցութիւնը խնդրելու համար: Նախ յայտնուեցաւ, որ պապը պիտի ընդունի պ. Ատկինին, ապա հաղորդուեցաւ, որ նրան ընդունել է պապի դիւանապետ Ռամպոլլն: Այժմ պապի բերան թերթը, «Օսսերվատորէ Ռոմանոն», յայտնում է, որ պապը համաձայնութիւն չէ յայտնել պ. Ատկինին ընդունելու և թէ ինքն արդէն հայկական խնդրի համար չափ քան է արել, որ ժամանակին կիմացուի:

— Ալպեան լեռներում գտնուող հոգևաւոր ս. Բերնարդոսի հիւրատանը բաղմամբիւ յաճախորդներն ուշագործութիւնը գրաւում է օգոստոս ամսի սկզբից ի վեր մի կրօնաւոր, որ միւսներից տարբեր տարազ ունի, չափազանց հմուտ կերպով խօսում է զանազան լեզուներ, բաղմակողմանի բարձր կրթութեան տէր է և գիտէ շատ գրաւիչ ազդեցութիւն թողնել բոլոր հիւրերի վերայ: Առանձին համակրութիւն և հետաքրքրութիւն է ցոյց տալիս նա դէպի Անգլիացիները, որոնցից մանաւանդ տիկնայք, այնչափ հրապուրուել են նրանով, որ խնդրել և խոստումն են առել նրանից, հիւր ընդունել նրան իրենց մօտ շուտով: Անգլիայում կատարելիք ճանապարհորդութեան միջոցին, Միւս կրօնաւորները խոյս են տալիս այս անձի մասին որ և է լսեղնելութիւն հաղորդելուց և շատերը ենթագրում են, որ նա պապի կողմից ուղարկուած մէկը պէտք է լինի և նրա առաքելութիւնը կապ ունի Անգլիոյ մէջ կաթոլիկութիւն տարածելու ծրագրի հետ:

ՕՐԹՈՒՌՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

Ի ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԻՒՆ.

4. Պոլսի յունաց տիեզերական պատրիարք Անթեմոս Ը-ի յարաբերութիւնները Բ. Դրան հետ խիստ բարեկամական են։ Օսմանեան տէրութեան վաղնջական սովորութիւնն է հպատակ ազգերի համերաշխութիւնն արգելելու համար երբեմն մէկին և երբեմն միւսին քաջալերելը։ Այժմեան պատրիարքի ընտրութեան հանգամանքները լաւ յայտնի են մեր ընթերցողներին։ Նախորդ Յովակիմ պատրիարքի օրով դպրոցական խնդիրներն այն աստիճանի սուր կերպարանք էին ստացել, որ յոյն եկեղեցականութիւնը ստիպուած եղաւ պատրիարքին գահից վայր առնել։ Նորընտիր պատրիարքի առաջին քայլերն իսկ նպաստաւոր եղան առկախ խնդիրներ լուծման համար, որովհետեւ տէրութիւնը իւր հպատակ ազգերին միանուագ չը գրգռելու համար, զիջումներ արաւ։ Այդ զիջումներից խրախուսուած Անթիմոս պատրիարքը, Դրան ծառայելու գործում առանձին եռանդ ցոյց տուաւ։ Մինչև իսկ փոխանակ դէպի հայկական քոյր եկեղեցին այս տաղանապալից օրերում կարեկցութիւն ցոյց տալու, իւր հօտն զգուշացրեց հայերի տէրութեան վնասակար ընթացքից։ Լրագիրներն արդ հաղորդում են, որ նախկին պատրիարքը, Սրբազան Յովակիմ եպիսկոպոսը, յանդիմանական գիր է ուղղել ներկայ պատրիարքին։ Յոյն ժողովուրդն ևս համակիր է իւր նախկին պատրիարքին և դժգոհ ներկայ պատրիարքից, որ շլացած Դրան իրեն կապած թռչակից, պատճառ է լինում երկու հաւատակից ազգերի յարաբերութիւնների սառնութեան։

2. ՌՈՒՄԱՅ ԵՆԵՂԵՑԻ.

— Սեպտեմբերի 10-ին Ֆինլանդիայի առաջնորդ Անտոնիոս եպիսկոպոսի հաճութեամբ Հելսինգֆորսում օրթոդոքս ֆինների համար շուեդական լեզուով պատարագ է մատուցուել։ Այլազգի օրթոդոքսների համար իրենց մայրենի լեզուով ժամասացութիւններ մտցնելու օգուտները տեսնելով՝ ռուսաց եկեղեցին վերջերս առանձին ձիգն է թափում ամենուրեք, հաւատացեալների այդ պահանջին զոհացումն տալու։

— Ժողովրդական կրթութեան գործը, որ հանդուցեալ կայսեր ժամանակ մեծաւ մասամբ եկեղեցականների խնամքին էր յանձնուած, այժմ առանձին քննադատութեան առարկայ է դարձել ռուս մամուլի։ Մամուլի յառաջագէտ կոչուած մասը ձգնում է վիճակագրական փաստերով ապացուցանել եկեղեցականների անձեռնհասութիւնը այդ

գործում։ Մինչ եկեղեցական և համալսարանական ուղղութեան թերթերը անընդհատ գովասանքներով են խօսում եկեղեցականների գործունէութեան մասին։ Այս վիճաբանութիւններից այն ակներեւ եղրակացութեան ենք հասնում, որ շատ տեղ ռուս եկեղեցականութիւնը դեռ իւր կոչման համապատասխան կրթութեան և նիւթական ապահովութեան աստիճանին հասած չը լինելով՝ անկարող է հանդիսանում կրթութեան գործը յառաջ տանելու։ «Եկեղեցական համալսարան» առանձին գոհունակութեամբ արձանագրում է մի քանի վանքերի ժողովրդի կրթութեան նուիրած ձեռնարկութիւնները։ Ռուսաց վանքերից մի քանիսը վերջին ժամանակներս իրենց ծախքով ժողովրդական դպրոցներ են պահում, որի մասին «Թեմական թերթերից» մին բացականչում է. «—Հա վանքերի կողմից մի իսկապէս գովելի զոհաբերութիւն յօգուտ աշխարհականների»։ Հայ վանքերի այսպիսի զոհաբերութիւնները քամահարողները թող ռուսներն գնահատել մեր վանքերը որոնք աններելի անտարբերութեան շնորհիւ այսօր ոչնչանալու վրայ են։

— Ռուսաց եկեղեցու մէջ այժմ մեծ խնամք է տարուում եկեղեցական երդեցողութեան վրայ։ Եկեղեցական—ծխական դպրոցներում առանձին ուշադրութիւն է դարձրած եկեղեցական երդեցողութեան վրայ։ Թեմակալ առաջնորդները իրենց հօտին այցելութեան ելած միջոցին յորդորում և պահանջում են, որ եկեղեցական համայնքների մէջ երգեցիկ խմբեր կազմուին եկեղեցիներում երգելու համար։ Ահա մի շատ բնական ճանապարհ եկեղեցական երդեցողութիւնը բարեփելու։ Եւրոպայում յետեւալ դիւղերումն անգամ կան համայնքի երիտասարդներից կազմուած աղատակամ երգեցիկ խմբեր, որոնց նպատակն է միմիայն եկեղեցում երգել։ Եթէ գեղեցիկ երգեցողութիւնը պահանջ է ժողովրդի համար, նա ինքը պիտի հոգայ իւր այդ պիտոյքը, անարդարութիւն է ամեն ինչ եկեղեցական վարչութիւնից պահանջել։

Աւերջին ժամանակները ռուսաց երգեցիկ խմբերի ղեկավարները ձիգն են թափում և հին սլաւական եղանակները ժողովուրդ և զբանով փոխարինելու իտալական եղանակները, որ դարուց աւելի է մուտք է գործել ռուս եկեղեցիներում։ Այս գործի ձեռնարկութիւնը պատկանում է Մոսկուայի սինօդական երգեցիկ խմբի ղեկավարին։

— Հոկտեմբերի 17-ին ռուսաց բոյոր եկեղեցիներում զոհացողական մաղթանքներ են կատարուել կայսերական ընտանեաց 1888-ին երկաթուղու գնացքի խորտակումի ժամանակ աղատուելու առթիւ։

— Հոկտեմբերի 20-ին, Պայսր Աղեքսանդր

Գ-ի մահուան օրը, ամբողջ Ռուսիայում տարեկիցի հոգեհանգիստներ կատարուեցան, այս առթիւ շատ առաջնորդներ և վանքեր հոգեհաց են տուել աղքատներին:

— Նորին Կայսերական Մեծութեան Նիկոլայ Ալեքսանդրովիչի գահակալութեան օրը, հոկտեմբերի 21-ին, մաղթանքներ են կատարուել բոլոր ռուսական եկեղեցիներում:

— Այս ամառը ռուսաց երկու հնագոյն վանքերը տօնել են իրենց երկարամեայ գոյութեան յօթեկէանը. օգոստոսի 27-ին և 28-ին Պսկովի նահանգի Վրէպեցկի վանքը տօնել է իւր գոյութեան 400-ամեակը, Այս տօնախմբութեան օրը վանքն ուխտի են եկել 5000 հոգի, որոնց ամենին ձրի բաժանուել է վանքի հիմնադրի հայր Սարգայի վարքի նկարագիրն: Սեպտեմբերի 8-ին Պերմիան անապատը (Նովգորոդի նահանգում) տօնել է իւր գոյութեան 900-ամեակը:

— Եկեղեցական—ծխական հոգաբարձութիւնները թէ ի նշքան օգտակար կարող են լինել, տեսնում ենք Պետերբուրգի Չնամենակայա եկեղեցու հոգաբարձութեան երեսնամեայ գոյութեան առթիւ հրատարակուած հաշուից: Այդ ընկերութիւնը 1895 թ. առ 1. սեպտ. ունէր 221,914 ռ. անձնոմխելի դրամագլուխ և մի քառայարկ տուն երկու եռաշարկ կողմնակի շինութիւններով: Ծարեկան ծախքի գումարն հասնում է 2,650 ռ., որով պահուել է մի ապաստանարան դառամալ և խեղանգամ կանանց համար, ցերեխօթեայ ապաստանարան մանկանց և մի ապաստանարան փոքրահասակ որբերի համար: Նոյն այս տարուան ընթացքում այդ բարեգործական հաստատութիւնն օթեկան է տուել տնանկ կանանց, աժանագին ընկալարան բանւոր կանանց և միանուագ ու ամսական նպաստներ ու դեղեր է մատակարարել աղքատներին:

Ահա մի գեղեցիկ և օրինակելի ընկերութիւն իւրաքանչիւր եկեղեցական ծուխի համար:

5. ԲՈՂԱՐԻԱՆ ԵԿԵՂԵՑԻ:

Բոլոր ազգն ու եկեղեցին առանձին եռանդ է ցոյց տալիս կրկին բարեկամանալու ռուսաց հետ: Բոլորախի ազգային ժողովի նախագահն ու պատգամաւորներէրց ոմանք Ալեքէնտ Կախկոպովի ուղեկցութեամբ այս տարի գարնանը Ռուսիա ուղեորուեցան և ամենուրեք մեծ պատիւներով ընդունուեցան: Լրագիրների խօսքերին նայելով այդ պատգամաւորութեան նպատակն էր իմանալ, թէ ինչ պայմաններով կարող են բոլորները կրկին ձեռք բերել ռուսաց կառավարութեան և ժողովրդի բարեկամութիւնը: Այդ պատգամաւորութեան ցուցմունքներից արդէն օգտուում է Բոլղարիան, ամենքն էլ պա-

հանջում են, որ այժմեան իշխանի մանկահասակ Բորիս որդին ուղղափառ մկրտուի և ինչպէս երևում է, այդ շատ շուտով իրողութիւն կը դառնայ:

— Կ. Պոլսի բոլղարական եղբայրներն ևս զըջացած է իւր հակուսական ընթացքի վերայ և ինչպէս հաղորդում է «Նովոյէ վրեմիայի» Կ. Պոլսի թղթակիցը, նա ևս միջոցներ է փնտռում իւր հին բարեկամութիւնը վերանորոգելու:

ԱՄԵՐԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ:

Պապի Անգլիական ազգին ուղղած կոնդակը շարունակում է յուզել մաքերը: Մինչև այժմ անգլիական եկեղեցու բոլոր նշանաւոր ներկայացուցիչներն ևս յայտնել են իրենց կարծիքն այս միութեան առթիւ, բոլորեքեան էլ մերժելով մերժում են միանալ Հռովմի հետ: Անգլիական եկեղեցական ժողովը Նորվիչում այդ խնդրով ևս զբաղուեց: Եօրկի արքեպիսկոպոսը ժողովի բացումից առաջ մի ծառ խօսեցաւ, որ հակառակ ցարգ տրուած մերժողական պատասխանների, զբական կերպիւ է պատասխանում պապի առաջարկին:

Եօրկի արքեպիսկոպոսը քրիստոնէական եկեղեցու միութիւնը ոչ միայն հնարաւոր է համարում, այլ անհրաժեշտ իսկ, նրա կարծիքով արեւմտեան քրիստոնեայք կարօտ են միութեան և այդ միութեան կենդրոնը պիտի լինի Նախկին և հին կենդրոնը, Հռովմը, Հարկաւ Հռովմը կարող է այդ կենդրոնը դառնալ, եթէ իւր նորամուծութիւններից և անիրաւ պահանջներից հրաժարուի իսկ Եօրքի արքեպիսկոպոսը կարծում է, որ այդ մասին պէտք չէ յուսահատուել: Եթէ Հռովմը կարիք է համարել նոր դաւանութիւններ մտցնել, որոնցով նա բաժանուել է միւս քրիստոնեաներից, այդու իսկ նա թոյլ է տալիս ենթադրելու, որ մի օր կարող է այդ նորամուծութիւնները թողնել, որով և միանալ մնացած քրիստոնեայ աշխարհին:

— Նորվիչի ժողովում առանձին խորհրդածութեան խնդիր է դարձել և «ազգային եկեղեցու» գոյութեան խնդիրը: Այս խնդրի մշակութեան մասնակցել են շատ նշանաւոր եկեղեցականներ և եկեղեցական պատմութեան գիտակ հեղինակութիւններ: Ամենքն ևս կարեւոր են համարել ազգային եկեղեցիների իրաւունքները պաշտպանել: Այս խնդրի մասին խօսել է և Զուլիգերիոյ հին կաթողիկոսների պիսկոպոս Հերցոգը, որ մեծ յաջողութեամբ ապացուցել է ազգային եկեղեցիների անկախութեան իրաւունքը, որ համաձայն է Փրկչի վարդապետութեան և առաքեալների և աիեղերական ժողովների կանոնների:

— Ամերիկայի անգլիական եկեղեցականներն ևս

պարբերաբար ժողովներ են գումարում եկեղեցու պետքերի մասին խորհելու։ Իւրաքանչիւր երեք տարին մի անգամ Ամերիկայի անդլիկան եպիսկոպոսները և համայնքների ներկայացուցիչները մի համաժողով են կազմում։ Այս տարուան ժողովը տեղի է ունեցել Մեննէսաթլսում և զբաղուել է եկեղեցական ու կրօնական շատ հետաքրքրական խնդիրներով, որոնց մասին յաջորդ համարում կը խօսենք։

— Արգեօք երեւակայել կարող են մեր խեղճ գիւղական և քաղաքային աղքատ քահանաները, որ Անգլիայի պէս հարուստ երկրումն էլ քահանայից վիճակն ապահովելու խնդիր գոյութիւն ունի։ Թէ ի՞նչքան տարբեր են ապահով վիճակի մասին գաղափարները, այդ երևում է Նորվիչի եպիսկոպոսի տուած հաշուից։ Նորվիչ քաղաքի այս տարուան եկեղեցական համաժողովում խնդիր է եղել և քահանայական դասակարգի ապահովութեան մասին, այդ քաղաքի առաջնորդ եպիսկոպոսն իւր թեմի եկեղեցականների աղքատութեան մասին զանգատելով հետեւեալ հաշիւն է տալիս։ Նորվիչի թեմում կան 124 այնպիսի ծուխ, որոնց մէջ քահանայք ստանում են տարեկան միմիայն 100 ֆ. ստ. (այսինքն 1000 ռուբլի), 292 ծխերի մէջ տարեկան եկամուտը հասնում է 100—200 ֆ. ստերլինգի, 220 ծխատեր քահանայ ստանում են տարեկան 200—300 ֆ. ստ. (2000—3000 ռուբլի), իսկ 145 ծխերի մէջ քահանայից եկամուտն հասնում է 300—400 ֆ. ստ.։

Ընդհանրապէս առնելով այդ թեմի 931 ծխերից 781 ծխատէրերը տարեկան 400 ֆունտ ստերլենգեց պակաս չեն ստանում և 416 ծխատէրեր միայն տարեկան 200 ֆ.-ից պակաս են ստանում։ Նորվիչի առաջնորդութեան մէջ դեռ կան 150 ծխեր, ուր քահանայք տարեկան 400 ֆ. ստ.-ից (4000 ռուբլի) աւելի են ստանում։ Եւ այս դեռ աղքատութիւն է կոչուում։

Այս վիճակի նկարագիրը կատարեալ անելու համար նոյն թեմի գէկանն հաղորդեց, որ թեմում կայ մի առանձին ընկերութիւն, որի նպատակն է օգնել աղքատ եկեղեցականներին։ Այդ ընկերութեան զիմող իւրաքանչիւր քահանայ 15 տարի պաշտօնավարութիւնից յետոյ ստանում է տարեկան 2000 ռուբլի օժանդակութիւն, որ քիչ համարուելով ձգտում են այդ օժանդակութիւնը տարեկան գոնէ 3000 ռուբլի դարձնել։

Ահա թէ ի՞նչպէս կարող են մասնաւոր բարեգործական ընկերութիւնները հասարակական բեռները բառնալ։

— Սեպտեմբերի 22—24 կատարուեցաւ Լօնդոնում հնագոյն բողոքական առաքելութեան հար-

իւրամեակը, Այդ ընկերութեան անունն է «Լօնդոնի առաքելութեան ընկերութիւն»։ Այս դարու ընթացքում ընկերութիւնը 1000-ի չափ առաքելներ է հանել աշխարհիս մէջ կողմերը կոապաշաներին քարոզելու։ Այժմ աշխատում են այդ ընկերութեան 285 առաքելներն օժանդակութեամբ 14,000 օգնականների, որոնք նորագործներին են։ Ընկերութեան դպրոցների թիւն է 1,900, որոնց մէջ ուսանում են 125,000 մանկուք, Հիւանդանոցներ ևս պահում է այդ ընկերութիւնը, վերջին տարուան ընթացքում հիւանդանոցներում դարմանուել և օգնութիւն են ստացել 100,000 հիւանդներ։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ՝

Փ Ր Ա Ն Ս Ի Ա.

— Աերջերս Փրանսիական բողոքականների մի քանի ժողովներում առաջարկութիւն է եղել 3—4 տարին մի անգամ մի Փրանսիական—բողոքական համաժողով գումարել, որի նպատակը լինի մի կողմից կաթոլիկ եկեղեցու դէմ պաշտպանութեան միջոցներ ձեռք առնել, միւս կողմից ներքին վեճերը վերջացնել և զանազան դաւանութեանց պատկանող բողոքականներին իրար մօտենալու նպատակ։

— 1894 թ.-ի Փրանսիական բողոքականութեան տարեգիրքը Փրանսիայում ապրող բողոքականների մասին հետեւեալ հաշիւն է տալիս։ Վալվինականներն ունին 101 կոնսիստորիաներ և 182 մեծ ու փոքր եկեղեցիներ, ծուխերի ընդհանուր թիւը 1232 է 638 պատուիրարով, որոնք պետութիւնից ռոճիկ են ստանում, ժողովրդի ընդհանուր թիւն է 540,483 Լուտերական եկեղեցին ունի 6 կոնսիստորիաներ, 49 ծուխ, 62 պատուիրարով և 77,553 ծխականներով, Աթերում կան 3 կոնսիստորիաներ, լուտեական թէ կալվինական, ընդամենը 16 ծուխ, 20 պատուիրարով և 107,89 ծխականներով, Փրանսիայի բոլոր բողոքականների ընդհանուր թիւն է 639,825։

— Յայտնի է որ Փրանսիայի պետական դպրոցներում կրօն դաս չի տրուում և կաթոլիկ եկեղեցին իւր առանձին դպրոցներն ունի։ Աերջին հաշուից երևում է, որ միայն Փարիզի մէջ 200 այսպիսի դպրոցներ կան 76000 աշակերտներով, Փրանսիան ունի 1200 վանքեր, որոնց մէջ ապաստան են գրանում 30000 վանականներ և 4000 կոյսեր։

ՀՈՒՌՑԵՐԻՆ.

— Փրանսիական Զուիցերիայում այսպէս կոչուած Ազատ Եկեղեցին, որ 30-ական թուականներից

ի վեր պետական (կալվինական) եկեղեցու հետ միասին գոյութիւն ունի և որի գլխաւոր կազմակերպութիւն տուողը եղել է անուանի աստուածաբան Ալեքսանդր Ալինէն, բաւական ժամանակ խաղաղ ընթացք ունենալուց յետոյ, յարուցել է կրկին հին վէճը իւր հարեանի հետ: Այս վէճին առիթ է եղել մասամբ ոմն պատուր Թիստմայէրի բրոշիւրը, որ գաղափարական գոյներով նկարագրում է եկեղեցու ազատութիւնը և նորինոր թուում այն չարիքները, որոնք յառաջ են գալիս եկեղեցին պետական կարգերի հետ կապելուց: Այսպիսով թէ՛ նրա և թէ՛ հակառակորդների գրութեան ձևերի մէջ արծարծուում է կրկին մի ընդհանուր խնդիր, որ կենդանի է նաև Անգլիայում ու գրեթէ բոլոր Եւրոպայում և որի լուծման վերայ գուցէ դեռ ամբողջ սերունդներ աշխատեն: Պէտք է արգելք եկեղեցին բոլորովին բաժանել պետութիւնից: Ինչպէս յայտնի է այդ խնդրին արդէն լուծուած է Ամերիկայում, ուր եկեղեցին պետութիւնից բոլորովին անկախ մարմին է և շարունակում է սակայն առաջնայ համեմատութեամբ հսկայական քայլերով առաջ գնալ:

ԱՄԵՐԻԿԱ.

Ամերիկայի Անգրեգատիոնալիստ եկեղեցիները որոշել են նորերս մի պատգամաւորութիւն ուղարկել Ճապոնիա, տեղն ու տեղը քննելու այն խնդիրները, որոնք հետեանք են քրիստոնէութեան զարգանալուն այս երկրում: Ինչպէս որ առհասարակ Ճապոնացիք երկար ժամանակ եւրոպական և ամերիկական համալսարաններ յաճախելով և արգի գիտութեան ու արուեստի արդիւնքը սեփականելով քաղաքակրթութեան մէջ այժմ անկախ դիրք բռնել են աշխատում այնպէս և նոցա սակաւաթիւ քրիստոնեաները ձգտում են ցոյց տալիս իրենց համար առանձին, միսիոնարներից անկախ եկեղեցի կազմակերպելու և առանց նոցա օգնութեան քրիստոնէութիւնը տարածելու իրենց երկրի մէջ: Այդ վերոյիշեալ պատգամաւորութեան նպատակն է տեսնել, արդե՞ք նոքա այնչափ հասունութիւն ունին, որ կարողանան անկախ կերպով գլուխ պահել և այնպիսի մի մեծ ու նշանաւոր գործ յառաջ տանել, ինչպիսին է ամբողջ մի նոր ժողովրդի քրիստոնեայ դարձնելը:

ԱՆԳԼԻԱ.

Այս տարուայ Պրեսբիտերիանների ժողովը Նիւկաստում որոշել է Լոնդոնի աստուածաբանական ֆակուլտետը Ամբրիջ փոխադրել այն նպատակով, որ ուսանողները միջոց ունենան առհասարակ գիտութեան բոլոր ծիւղերից օգտուելու: Երկու Անգ-

լուհիք, որոնք յայտնի են արդէն Սինա Լերան մենաստանում գտած Կրքի մի նշանաւոր ձեռագրով, նուիրել են նոր ֆակուլտետի համար կառուցանելի շէնքի տեղը և 5000 ֆունտ դրամ շինութեան համար:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

ՔՐԻՍՏՈՆԵԱՆՆԵՐԻ ԵՒ ՄԱՆՄԵՏԱԿԱՆՆԵՐԻ ՑԱՐԱՐԵՐՈՒ-
ԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ:

Ճիշդ մի տարի է ահա, որ եւրոպական մամուլը զբաղուած է տաճկական տէրութեան մէջ բնակուող քրիստոնեաների և մասնաւորապէս հայ քրիստոնեաների վիճակով: Այս առաջին անգամը է սակայն, որ եւրոպական մամուլը զբաղուում է այդ խնդրով, մեր գարու ամբողջ պատմութեան ընթացքում Ցաճկաստանի քրիստոնեաների ճակատագրով շատ անգամ է զբաղուել Եւրոպան, որի համար այսպէս կոչուած «արեւելեան խնդիր» մի անլուծանելի կորդեան հանգոյց է դարձել: Այս անգամին եւրոպական քաղաքականութիւնն և մամուլը ստիպուեց այդ խնդիրը կրկին շարժել Սասնոյ դաւառի քստմնելի կոտորածների առթիւ: Սասնոյ կոտորածից մինչև մեր օրերը շարունակուող հայ քրիստոնէից հալածանքն ունի իւր ընդարձակ պատմութիւնը, որ երեւի մի օր նիւթ կը գառնայ մեր դարու ստուերակողմերը զարդարելու համար: «Արարատն» այդ մասին միայն պաշտօնական զեկուցագրերով կարող էր խօսել, որ դիզուած են հայրապետական զիւանում, սակայն զրա ժամանակը չէ հասել դեռ, մենք կամենում ենք առ այժմ արձանագրել այստեղ այն կարծիքներն, որ արտայայտել են օտար եկեղեցեաց բերան համարուող թերթերը: Թէպէտ եւրոպական և ամերիկական ամբողջ պարբերական մամուլը զբաղուել է այդ խնդրով, բայց «Արարատի» էջերն շատենել են այդ ամէնի մասին զեկուցումն տալու: Այդ գործը մեծ եռանդով և անօրինակ համերաշխութեամբ կատարել է մեր աշխարհական մամուլը, որի համար մի մեծ պարծանք պիտի լինի այդ: Մեղ համար շատ թանկ են այն համակրանաց ցոյցերը, որ արել են դէպի նահատակ հայ եկեղեցին իւր քոյր եկեղեցիք: Այս համակրանաց մէջ առանձինն նշանակութիւն ունին այն երկու մեծ ազգերի եկեղեցականաց ջանքերը, որոնք քաղաքական ասպարիզումն էլ միացած յոժերով գործել են յօգուտ հալածուած հայ քրիստոնէից: Ռուսաց մեծագոր կայսրութիւնը դարուց աւելի է ահա, որ մահմետականութեան լծի տակ ճնշուող քրիստոնեաներին խօսքով և գործով պաշտպանում է: Հայկական խնդրի